

ՀԱՅՈՑ ԱՀԵՂԱԶՈՐ ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀԸ

Դարանաղեաց լեռներէն, Դարանաղեաց լեռներէն
Արցունքի գետ իջուցէք ով հայ քաջեր, ոգիներ,
Այրարատէն ամպածրար աղի արցունք թող իջնեն.
Յուզումնալից արծազանդն արծազանդին թող գուժէ,
Լեռներ, վիհեր թող հեծեն; ծով ու ցամաք թող կոծեն.
Ձեր խոր քունէն արթնցէք վաղընջական ով ազգեր,
Արշակունին թող զարթու, ճակտին պըսակն առնական,
Թող արթննան վաղեմի հայ դիւցազներն անձնազեղ,
Դամբաններէն մըթապատ դուրս կարկառած ապշահար:
Ահա ինկաւ թագաւորն, ինկաւ արքան մեծազօր,
Ինկաւ կըռփողն ահարկու ապստամբին սասանեան
Մըրցողն ինկաւ ձիերու, հրսկաներու, փիղերու.
Կոթող ունէր Մասիսէն մինչ Մազգութներ ու Գոթեր,
Յաղթանակներ բերաւոր, պատերազմներ անհամար.
Տէր եւ փըրկիչ մեծափառ ազգատոհմին Արամայ.
Աստուածներուն վրտարող, աստուածապաշտ օրէնադիր.
Հեթանոսին հիացում, քրիստոնէին սուրբ նախանձ.
Եկեղեցւոյ զօրութիւն, աշխարհքի փառք ու թիկունք.
Իմաստութեամբ կատարեալ, լուսազարթում համօրէն:
Թորդոմի փառքն ու սարսափն հիւսիսական ցեղերուն,
Ինկաւ Տըրդատ մեծ արքան, Տըրդատն ինկաւ ահարկու:
Մարդերու մեծը Տըդատ, արքաներու գերագոյնն,
Հայկ էր ուժովն անվրկանդ, հաւատքովն էր Գըրիգոր.
Արշակունին սէգ Տըրդատ լեռնաթումբեր աւերող,
Հեղեղներու դիմագրաւ, գետերու դէմ ամբարտակ.
Որ մէկ թափով ձիաւոր երկաթաղէն Գեղոեհոնն
Ու գոռ Հըռչէն հողին հետ իր նիզակով կը կարէր.
Մըրցումներու մէջ բոլոր յաղթող Տըդատն հանձարեղ
Հայոց հրգօր թագաւոր, ինկաւ Տըդատն ահարկու:
Լացէ՛ք լեռներ հայկական, լացէ՛ք արքան մեծազօր.
Ի՞նչպէս ինկաւ այն հրական ուր սարերէն կ'որոտար.
Դարանաղեաց հէզ լեռներ արցունքի գետ թափեցէք.
Արիւն թող գայ աչքերէն սիրելիին զայրազնած,
Թող բախէ ծոցն ապառու, թող արիւնին քար սըրտեր:
Բարեկամ ձեռք մ'անօրէն կայծ արձակեց մահաբեր
Դաւաճանեց սիրելին, եղբայրն եղբօր րսպանող.
Աշխարհաւեր ո՛վ հարուած, ո՛վ դառնութիւն մահէն չար.
Յաւերժական նախատինք, Հայաստանի մութ վէրքեր.
Երանի թէ դարերու քօղը ծածկէր էջն այդ սեւ:
Դարանաղեաց հէ՛զ լեռներ աղիողորմ գուժեցէք.
Լացէ՛ք, լացէ՛ք դաւաճանն, արքան լացէ՛ք, լացէ՛ք զձեզ.

Թող Թորդանայ ճամբուն վրայ հրնչեն դետեր արցունքի
Զղջման ձայներ ողբական, սըրտի բողբոջն աղեկէջ
Թող ծաւալի սեւ ալիք դազաղին շուրջն ոսկիապատ
Ուր կը նընջէ ծեր առիւծն Արշակունին մեծագոր։...
Ի՞նչպէս մեռաւ մեծագոր առիւծակերպըն Տըրգատ։—
Ծեր հասակով, բայց իր սիրտն երիտասարդ, թեւն ուժեղ,
կորիւններու մէջ նըստած իբրեւ առիւծ հերապանծ
Նախարարացն հայազարմ դահերէն վեր չորս հարիւր,
Ամպերու մէջ ըսպիտակ Մասիսի պէս երկնածայր
Թուի բիբերով կը շանթէր, կայծ կը հանէր ամենուր։
Արեւելքէն արքաներ, դեսպան կու դար հիւսիւսէն,
Խուժաստաններ հընազանդ կը սպասէին հրամանին.
Զորս կողմնակալ՝ նայուածքին ուշի ուշով ակընդէտ
Կը պատռէին հորիզոնն հըրով սըրով դիւակալ.
Երբ կը վաղէր տիրելու զօրքն ետեւէն կ'ամպանար
Երբոր կու տար ձայն ուղմի աշխարհն ամբողջ կը թընդար.
Շըրթունքն օրէնք կը ծորէր, աչքերը մահ, սիրտը սէր։
Վա՛յ իշխաններ դիւահար՝ որ չըճանչցաք այդ հըսկան.
Իր ոսոխին զինակից՝ Շապուհին հետ դաւեցիք,
Անսանձ կըրթով պաշտելու պիղծ կըրօնքներն համարձակ,
Աստուածորդին լըքելով կանգնելու դահն Անահտի.
Մոռցըւեցան քաջազնին յիսուն տարուան քրտիքներն։...
Ա՛յ տիրաննդ Սիւնեաց տուն, դուն մեր երկրին հարադէտ,
Պարսիկ արեւն երդուընցար, մարել արեւն հայկական
Դուն արքայի ծառային դըժոխակուռ վարձք տըւիր.
Ա՛յ պըղծասէր, մոլութիւն, արծաթասէր կոյր նախանձ.
Ո՞ր մէկ շարիք չըբերիք, ի՞նչ չար խորհուրդ չունեցաք.
Արծաթն առած անօրէնն Յուդայի պէս լուռ դաւեց։
Սիրտն ի դուր տեղ կը ծածկէ երեսն ինչ որ կը մատնէ.
Եւ թաղաւորն իմաստուն կը հարցնէ, «Ով ծառայ
Ի՞նչ հըծծիւն է, ի՞նչ է այդ իշխաններու քըթմընջիւն».
Իսկ ապերախտ վատասիրտն իր հոգերով խըռոված
Մերթ կը խորհէր դաւն յայտնել, մերթ անձնասպան հոն փըռուիլ.
Բայց դեւէն ոյժ առնելով, դէմքը սրտին պէս սառած
Կը ձեւանար անտեղեակ, կը բարբանջէր անիմաստ։
Գիտցաւ արքան դաւը մութ ծառաներուն խըստասիրտ,
Արքունիքէն համարձակ ելաւ զընաց անապատ
Լուսաւորչին հետեւող Մանեայ սուրբ այրը ճըղնիլ։
Իսկ այդ իժերն ահաբեկ թէ դաւն իրենց յայտ գալով
Անոր աչքին շանթերուն կը դարնըւին սըլաքով,
Քովը կ'երթան ճըղնասուն երկիրներու բընակչին,
Աստուածային վարագոյր քաշած իրենց կեղծ ուժմբին
Դողդըղալով ծընրադիր հոգն ոտքերուն կը լիզեն,
Կ'ապաշխարեն կը զըղջան, երգում կ'ընեն հնազանդիլ.
Այսպէս առիւծն որսալով կը բերեն դահն իր գաղտնի։...
Դարանադեաց հէգ լեռներ լացէք ձեր սուր գաղաթով.
Արիւնարբու իշխաններ Տըրգատի մահը կ'ուզեն։

Նաւասարդի կենսաբեր առաւօտն է գեղեցիկ
 Յիշատակի առաւօտ, նըւիրական Անահտի,
 Երբոր կու դար սիւղանմ արեւմուտքէն յաղթական
 Տըրդատի յաղթ բաղուելով ազատութեան տարեդարձ,
 Բոցն աչքերուն շանթելով կ'արթնցընէր Հայաստանն
 Ու քաջարար դռնալով կը հալածէր Պարսիկներն:
 Իր գընացքն էր գեղեցիկ նըման մանուկ օրերուն,
 Վարսերուն մէջ արծաթհիւս գըլուխը վեհ կը շարժէր
 Շուրջը ճակտին իննըսուն պսակած էին տարիներ
 Ու գերդ մայրի հինաւորաց ըսպայից մէջ թիկնաւէտ
 Արքայաշուք հովանին ամբողջ բանակն էր բըռնած:
 Երբ բարձրավիդ փըրփրերախ ձին կը նըստէր հըրաթեւ
 Ոչ մէկ հեծեալ այդ քաջին կը յառաջէր խոյանքին:
 Մըրըրկարչաւ քայլերով կ'որսար վիթեր, այծեամներ,
 Մըրըններով մըրըրդներ ետ կը ձըգէր շնչասպառ,
 Աղեղնաձիգ ինչպէս Հայկն իր սլաքն էր անվըրէպ.
 Լեռը լեռնէն կը զատէր հըսկայօրէն շոպելով.
 Անվախ վարազն արածող վըհերու մէջ կը նետէր.
 Այսպէս էր կեանքն ամէն օր ծեր արքային Տըրդատի:
 Բայց դո՛ւք, լացէք բարձրաճայն Դարանաղեաց հէզ լեռներ,
 Իջէք, սեւ, թանձր ըստուերներ, արեւ ջու աչքըդ կուրնայ
 Աղեղ առաւ ժանտ Սիսակն, աղեղ լարեց մահաձին
 Գազաններու հետ կըռուող արքային դէմ իր բընիկ...
 Ա՛յ, դօսացի՛ր, չորցի՛ր ձեռք, դու որո՞ւ դէմ ժպրհեցար.
 Թագաւորիդ խոսքովին այդպէս նենդեց ժանտ Պարթեւն,
 Եւ ի՛նչ խաւար հայ երկրին, ո՛րքան անէճք Անակին.
 Իսկ դու ջու տէրդ եւ փըրկիչդ, ո՛վ վատ ա՛յդպէս կը սպաննես.
 Այդ տիրաննեդ ոճիւրէն սարսափ կը զգան երկինքներ: ...
 Իջէ՛ք, իջէ՛ք ստուերներ, իջէ՛ք մըրոյլ Տըրդատին:
 Ան վիրաւոր՝ բայց ահեղ, հարուածը վատ կը ծաղրէ
 Կողբայ զարնողն, եւ կ'երթայ ներողամիտ արքունիքն.
 Նաւասարդեան առաւօտն աղջամուղջով կը պատի:
 Ով բարապան ժանտաղէմ սատանային համահարդ,
 Իր մեծ տիրոջն ահաւոր մահուան բաժակ կ'երկարէ...
 Եւ դուն տեսար ո՛վ երկինք, հանդուրժեցիր պըշտալով.
 Ու թոյլ տըւիր սպանութեան, եւ սուգ բերել աշխարհիս:
 Այսպէս երկնի կամքն ուղեց զոր չենք կըրնար մենք դատել:
 Բաժակին հետ մահախառն ըմպեց պատուէրն Աստուծոյ,
 Ըմպեց Տըրդատ զոհացաւ, ըսաւ «Տիրոջ կամքն ըլլայ»:
 Որպէս զի երբ հողին տայ՝ սուգ չըպատէ Հայաստան
 Եւ երբ փակէ աչքն ահեղ՝ աշխարհի լոյսն ալ չանցնի,
 Վարազուրեց դէմքն անխռով, հողին անմահ աւանդեց: ...
 Քուն էր կարծես այդ առիւծն, Արշակունին Տըրդատէս,
 Վսեմութիւն մը կար իր յօնքերուն մէջ ու ճակտին,
 Լոյս կը ցոլար հաւասար, դէմքն անթառամ վարդի դոյն.
 Տեսան մարդիկ սոսկացին, ու սիրտ չըրին մօտենալ:
 Իջէք, իջէք ըստուերներ լեռներուն մէջ հայկական:

Այսպէս մեռցուց կոյր նախանձն այնքան հըզօր թագաւորն,
 Այսպէս մարեց Հայաստան ըսքանչելի իր արփին.
 Այսպէս մեռաւ մարդերուն, անմահներուն հրաշալին: ...
 Ինկաւ Մասեաց հաշտ կամար զոր բարձրացուց Գըրիգոր,
 Թիկունք դարձուց Հայերուն, պաշտպանն եղաւ վրէժի գէնք:
 Վերէն երկինք փոթորկեց, վարէն դըժոխքն որոտաց,
 Փեռեկելով Մասիսի վհերն ելան սեւ գունդեր:
 Տարին հեռուն ուրախ լուր, թըշնամիներ յարուցին:
 Ահա կու գայ սէգ Շապուհն իր պարտութեանց վրէժինդեր.
 Հրոսակ կու գայ հիւսիսէն ինչպէս ձիւնի բարդ տարափ,
 Կ'ասպատակեն ամենուր, կը խորտակեն պարիսպներ,
 Անթիւ գերի կը տանին շընորհազուրկ Մասիսէն: ...
 Փախէ՛ք դաշտեր ու քարեր, ահա եկաւ սուր եւ հուր...
 Զո՞վ պիտ' կոչէք զօրավիդ, Յոյնը լըքեց, իսկ Պարսիկն
 Անհաշտ ոսոխ. Հոնն եկաւ, Արանն եկաւ արնախանձ:
 Նախարարներն ոխակալ, եղբայրն եղբօր ըսպանիչ,
 Յեղ ցեղի հետ եւ տուն տան՝ զուր տեղ զիրար կը ջարդեն,
 Զորս հովերուն կը ցրուի Հայաստանի գերութիւն: ...
 Խոռված աշխարհն ալեկոծ զուր կը խնդրէ հաշտութիւն: ...
 Ա՛հ, ծածկեցէք հայ ամպեր, մեր ցաւն առէք սեւ ամպեր.
 Լացէք լացէք ըստուերներ, լացէք սահմանք թորդանայ,
 Արշակունի առիւծն հոն՝ ահեղ քունով կը հանդչի: ...

Երեկոյեան մթնալոյս ըստուերներով խոնաւուտ
 Արշակունեաց պալատէն գունդեր կ'ելլեն լուռ ու մունջ.
 Սեւ երկով առջեւէն կ'երթայ զըրօշն արքունի,
 Կը հընչէ փողն. — Օ՛հ եկէք, Տըրդատ արքան է մեռած: —
 Անցորդներն իսկ քարացած ծունկի կու գան դողդոջուն.
 Կ'իջնեն ոսկի գահերէն ու բերդերէն յուղարկու:
 Փափուկ հարսերն ամօթխած առաքաստէն դուրս ելան,
 Կոյսերն ըրած սուղը քօղ՝ հոն կը փութան հերարձակ.
 Եւ ծերութիւնն իր ցուպով ետ չէր մընար բոլորէն.
 Բընութենէն ըզգացուած կը հաւաքուէր Հայաստանն,
 Ամպի նըման կը դիզուէր, փոշիի պէս կը սըփոռէր:
 Եւ ահա բիւր դըռնակներ ճաճանչաղեղ կը փայլին,
 Իսկ հայրապետն առջեւէն կ'երթար վըսեմ Վրթանէս,
 Առաջնորդներ թագադարդ, պաշտօնեաներ անհամար
 Հանդարտ քայլով կ'երթային բուրվառին հետ օրհնարոյր.
 Յետոյ կու դար կառքն ոսկի սեւ ու ճերմակ բեհեզով,
 Զորս ջորիներ ոսկեսանձ կը քաշէին թռչելով.
 Ծոպը կ'իջնէր բաշերնէն, քայլերն էին համաչափ.
 Մարմինը սուրբ պարփակող դադաղն համադր ձոյլ ոսկի,
 Ակունքներով պըճընւած եւ դիպակով նըբահիւս.
 Թիկնապահներ շուրջն անոր սուսերամերկ, միաքայլ,
 Ըսպայազունդն համօրէն գեղեցկօրէն զինադարդ,
 Վաշտեր երկու կողմերէն, փողփողենէջ դըռններով.

Նախարարներ կ'երթային, կ'երթար պալատն հայազարմ .
 Կարծես ամբողջ թորդոմին հոն էր բանակը ուղարկ .
 Վահանաւոր, տիգաւոր, հոն էր աղեղն ու մըկունդ .
 Բոլորը լուռ կ'անցնէին զէնքերն երկիր խոնարհած
 Հազար փողեր մերթ մարտի եւ մերթ ողբի երգերով :
 Սիրելիներ երկուստեք չըրջապատած են վըշտով,
 Իշխանագունք մեծամեծ, դողդոջ ձեռքով դրօշ բռնած,
 Ծիրանածին որդիներ կառքին քովէն հետիոտն,
 Բոլորը մէկ սրտառուչ ե'ւ կ'արտասուեն ե'ւ կ'երթան :
 Արծաթադեղ շեփորներ, սուգի տաւիղ քաղցրաձայն
 Կը պատառեն սիրտ եւ օդ, երկնէ երկիր բոթ կ'անցնի .
 Սրտածմլիկ կը ճըչան, ողբանքաւ կ'արտասուեն
 Սեւ քօղերով գիրգ կոյսեր, նուրբ քայլերով ամպարիկ,
 Վարսերն ուսին ծըփծրփուն, տըխուր աչքեր սեւորակ,
 Պարանոցներ մեղմօրօր, ինչպէս ճերմակ շուշաններ .
 Վարսերու յորդ խոպոպներ անաղորոյն կը փրցնեն
 Կարմըրանուռ այտերուն վըրան ախօս բանալով :
 Ամբողջ յորձանքը ուսկին յուղարկաւոր սրտաբեկ
 Յուսալքուած կու լային եւ կ'երթային գլխիկոր .
 «Հազար ափսո՛ս, որ մեռաւ մեր քաջ արքան բարեսէր,
 Հազար ափսո՛ս մեր որդւոց, այս ի՛նչ խաւար էր պատեց .
 Ի՞նչպէս մեռաւ մեծագոր Տրդատ արքան մեր անմահ»...
 Դարանաղեաց հէգ լեռնե՛ր, խօլ ըստուերներ իջուցէք,
 Իջէք, իջէք Թորդանայ շիրմին վըրայ դերդ արձան :
 Հոն կը հանգչի վահափառ Տրդատն Հայոց մեծ արքան,
 Հոն կը նընջէ աշխարհիս առիւծասիրտ ահարկուն .
 Հոն քուն կ'ըլլայ դէմքը փակ յաղթող վըկան Քրիստոսի
 Մարմարի մէջ տարածուած, բարձ կըրանիտն ամրակուռ .
 Կափարիչ մը տըխրադէմ արեւն Հայոց կը ծածկէ :
 Ինչպէս անքուն պահապան դայն կը դիտեն հրեշտակներ .
 Հառաչանքներ կը լըսուին ճգնարանէն Մանէի .
 Ամէն ոգի դայն կ'ողբայ, ամէն փերի կ'արտասուէ
 Զայն որ հիւսիս եւ հարաւ վաթսուն տարի չղթայեց,
 Հըսկաներուն բըռնաւոր կըռփող Տըրդատն հիանալի,
 Թագաւորաց Թագաւոր, Տըրդատն արքայ գերագահ,
 Տըրդատ Հայոց խընամող, խաղաղութեան հանգրուան :
 Իրմէ առաջ ոչ ոք մեծ, իրմէ յետոյ ոչ ոք քաջ :
 Փողն ահագին կը գոչէր «Դարձէ՛ք, արքան հանգչեցաւ» :
 Իսկ բաղմութիւնը կարծես այնտեղ մընալ կը տենչար,
 Թեւերն օդին մէջ ծըփուն սըրտածմլիկ կը հարցնէր
 «Ի՞նչպէս ինկաւ մեծագոր հայրենեաց փա՛ռքը Տըրդատ»
 Սարեր, ձորեր Թորդանայ կը գոչէին «Ո՛հ Տըրդատ»...
 «Ի՞նչպէս ինկաւ մեծագոր հայրենեաց փա՛ռքը Տըրդատ» :

Թրգմ. հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
 Տիրե-Տաուա, 3 Յունուար 1939

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ
 1847

ՅՅՆԶԱՆՔՆԵՐՍ

Արփաթեւել սահմաններէն հորիզոնին
 Դէպի ափերն արշալոյսին ոսկեղինիկ,
 Անհունի ծովն ընկըմիւ, կամ Գաղափարին
 Վեհ բարձրութեան հըպիւ կատարը բալաճիգ՝
 Հողւոյս ահա տենչանքն հըղօր :

Ծընունդ հողի, բայց ելլել վեր այս բերտ նիւթէն
 Դէպի երկնի սըրբամաքուր անկոխ դօտին,
 Ու աստղերու ոսկեճամուկ բաւիղներէն
 Գիշերներով ման դալ, ըզզալ անցքն էակին՝
 Հողւոյս ահա տենչանքն հըղօր :

Փարած լոյսի յետին շիթին՝ որ կը ծորի
 Արեւմուտքի սեմին վըրայ հալող գունտէն,
 Ու մեկնելէն վերջն իսկ փընտուել բան մ'որ չմարի,
 Որ պատրանքովն անոր ապրի՛լ տայ մեզ նորէն՝
 Հողւոյս ահա տենչանքն հըղօր :

Այդ խուսափուկ լոյսի շիթին ծարաւն անյագ՝
 Զիս կը տանի անանց Լոյսի չըքնաղ ափին,
 Հոն ուր անմուտ Արեգակն է, Միտք երանեակ .
 Ապրի՛լ սուղուած երջանիկ մէ՛ջն այդ Յաւերթին՝
 Հողւոյս ահա տենչանքն հըղօր :

Ամփոփել մէկ հայեացքով մեծ անհունութիւնն,
 Ըլլալ կեդրոն լոյսի, գոյնի բեղբոսկումին,
 Ըլլալ հաղորդ տիեզերքի շարժման բեղուն,
 Խանդավառիլ ու երզն ըզզալ ծաղկին, բոյրին՝
 Հողւոյս ահա տենչանքն հըղօր :